այլ ճամբով առաջ կ'երթան մի և նոյն տեղը չեն երթար. սա պատճառաւ ա մենքն ալ մի և նոյն պիտոյքներն ունին, և սաստ հանար պարտական են և իրենց իրենց պիտոյքը լեցընել։

ԺԱ.

ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ՊԱՐՏՔ

Պարտական են և իրենց. Ուն սանց վրայ կեցած են մարդուս պարտքերն և իրաւունքները։ Ամեն մարդ ստեղծուած է Աստուծմէ միշտ լաւ ապրելու համար. ընկերութեամբ կ'ապրինք զմեզ պահպանելու, մեր վիճակը լաւցընելու ու կատարելագործուելու համար. ուրեմն ամենքն ալ իրաւունք ունին ան ամեն միջոցներուն ձեռք զարնել որ իրենց բարեկեցութիւն ապրելուն համար հարկաւոր են։ Ընկերութիւն ամենուն բարւոյն համար եղած է և ամեն մէկուն բաբին ըսել է. ուրեմն իւրաքանչիւրին պարտքն է իր բարւոյն ետեւէ ըլլալ. այսինքն լաւ վախճանին գործածել իրեն ունեցած իրաւունքները։ Ամեն մարդ հաւասար է. ուրեմն ամեն մարդ ալ նոյն իրաւունքն ունի. և հետեւաբար ամենուս ալ պարտքն է ուրիշին իրաւունքը մեծարել. թէ որ կ'ուզենք որ ուրիշներն ալ մեր իրաւունքները մեծարեն։ Գնած գիրքդ կամ մէկէն ընծայ առածդ քու իրաւունքդ է. ուրեմն ես ալ պարտական եմ զանիկայ քեզմէ չյափշտակել։ Աստի այսպէսով ամեն մէկ իրաւունքի հակառակ պարտք մը կը յառնէ, պարտք մը ի մեզ՝ այսինքն մեր իրաւունքը ինչ վախճանաւ որ տրուած է, նոյն վախճանին համեմատ բանեցընելու. եւ պարտք յայլս՝ ուրիշին իրաւունքը մեծարելու։

Հիմա քննենք թէ ինչ կերպով մենք պէտք է գործածենք սա իրաւունքներն ու պարտքերը։

ԺԲ.

ԻՐԱՒՈՒՆՔ ԵՒ ՊԱՐՏՔ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ

Կիրակի օրը Ներկայ գտնուեցայ Ժողովրդապետի (առաջնորդի) մը քրիստոնէական վարդապետութիւն բացատրելուն ժամանակը, որ սասանկ կ'ըսէր։

«Մի սպանաներ». Աստուած մեզի սասանկ հրամայեց. բայց դուք երբ որ խղճերնիդ կը քննէք իմանալու համար թէ արդեօք Աստուծոյ կամքը կատարեր էք թէ չէ, մտքերնիդ կը դնէք թէ սա պատուիրանքիս մէջ զանցառութիւն մը ըրած չէք. որովհետեւ բնաւ մէկը չէք սպանած և ոչ ալ մէկուն մահուանը փափաքեր էք. բայց ասիկայ արդեօք միայն բաւական է։ Աստուած ձեզի իբրեւ պարգեւ մը տուած է կեանքերնիդ. պարգեւ մը առանց որոյ չէք կրնար ոչ սա աշխարհիս բարիքը վայելել և ոչ ալ յաւիտենական բարեաց արժանի ըլլալ. ուրեմն իրաւունք կեանքերնիդ պահելու, և պարտական էք յարգելու զայն ի ձեզ և յայլս։ Ուրեմն ամենքը կրնան ու պարտական ալ են իրենց կեանքը, զգեստ ու բնակարան հայթայթելու, իրենց ուժն և անդամները պահպանելու, և կարելի եղածին չափ անանկ բանեցընելու՝ որ իր բարւոյն պատշաճ ըլլայ։

Պէոթ Շարոնեան։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Ընդհանուր Թուով իմացուցած էինք բարեսիրաց նորընտիր կառավարիչ վեր. Լաղիֆ փաշային գալուստը, որ մեծ հանդէսով ընդունուեցաւ և 21 ռումբ արձակուելով անոր ողջամբ ժամանիլը

digitised by A.R.A.R.@

քաղաքիս աւետեցաւ ։ Քանի մի օրէն յետոյ, ինչպէս սովորութիւն է՝ քաղաքիս երեւելի իսլամաց, ժողովոյ անդամոց, և երեք վանաց առաջ. Թարգմաններուն ներկայութեամբ իւր հրովարտակը կարդացուեցաւ. որոյ աւարտելէն յետոյ ինքը Վսեմ. Նազիֆ փաշային ոտք ելլելով քառորդ մի չափ ատենաբանեց, ի լուր բազմամթիւ ունկնդրաց. որոյ ատենախօսութենէն յայտնի կ'երեւէր իւր ազնիւ զգացմունքները, քաղաքականութեան մէջ կրօնի անտարբերութիւնը՝ որ նոյն խոկ իւր Տէրութեան սկզբունքն է, ինչպէս և ինքն ալ բանիւ բերանոյ կը վկայէր և իբր ի պաշտօնէ կ'իմացընէր իրեն յանձնուած հրամաններն ի գործ դնելու, այն է հաւասարութիւն հպատակ և անհպատակ ազգաց, իսլամաց և ոչ իսլամաց՝ առաջի օրինաց և իրաւանց տէրութեան. անաչառութիւն, արդարասիրութիւն, քաղցրութիւն ընդ ամենեսին, պաշտպանութիւն տկարին եւ կէտ առ կէտ գործադրութիւն Կայսերական հրամանաց և Նորին մարդասէր կամաց ։ Ասոնք են և պիտի ըլլան իւր կառավարութեան տարբերքը, ինչպէս յայտնի կը վկայէր իւր հրապարակախօսութեքը Վսեմ. Նազիֆ փաշային ։ Հրովարտակը կարդացուելէն օր մի յետոյ, փութացին Ամենապատիւ Պատրիարքունք, Մեծ. Հիւպատոսք և երեւելի անձինք շնորհաւորելու երթալ, որոնց իւրաքանչիւրին փոխադարձ այցելութեամբ բարեհաճեցաւ իրենց բնակարանը անձամբ երթալով պատուել զիրենք ։

Նախորդ կառավարիչ Իզզէթ փաշային՝ քանի մի օր Յունաց վանքը բնակելէն յետոյ մեկնեցաւ ի Դամասկոս ըստ հրամանի Բարձրագոյն Դրան ։

— Վսեմ. Նորընտիր փաշայի, մանաւանդ արքունի զօրաց հրամանատար Վսեմ. Իսա փաշայի արթուն հսկողութեամբը սուրբ Զատկի եւ ուրիշ յառաջացեալ աւուրց հանդիսաւոր թափօրները ամենայն խաղաղութեամբ կատարուեցան առանց ամենափոքրիկ անհանդստութի և վտանգ մի պատահելու, որ ոչ դոյզն նշանակութեան արժանի է ։ Ըստ այսպիսի հոգեւոր հանդէսներու մասին ունիմք գանգատելու անգլիք մի, այն է սուրբ Զատկի խթման այսինքն՝ լուսաւորեայի ժամանակ քանի մի քրիստոնեայ օտար հասարակութեանց անտակ և այլանդակ աղաղակները և անվայել շարժմունքները, որոնք հին աւելորդապաշտութենէ մի մնացեալ նշխարներ են ռամիկ ժողովրդոց քով ։ Հին ժամանակ, այն է խաչակրաց օրովը լատին կղերը իւր բարեպաշտ և միամիտ ժողովրդեան հետ սովորութիւն ունէր [illegible] և [illegible] գոչելու նոյն ժամուն մէջոյնները, յորում սրբազան լոյսը (le feu sacré) պիտի ելնէր ։ Այն սովորութիւնը հիմայ ճիշդ կը կատարուի արեւելեան եկեղեցւոյ ձեւով, միայն [illegible] բառը [illegible] փոխուելով, որ Միլլահ կանանց և Ղպտուոց բերնովը կ'արտասանուի երգախառն ձայներով ։ Փառք Աստուծոյ Հայոց ազգը որչափ որ իւր իրաւունքը չկորսնցընելու համար բանադատուած է լուսաւորեայի արարողութիւնը Յունաց հետ կատարելու, առանց ամենափոքր վանկ մի արձակելու հակառակ ոգւոյ հայկական անարատ պաշտամանց, այսու ամենայնիւ ի բնէ անոր ազատ է նախապաշարմունքներէ ու վնասակար աւելորդապաշտութիւններէ, յորոց երկու տարիէն ի վեր է կզգուշացընէ Նաեւ Ամեն. Սրբազան Պատրիարքը այն փոքրիկ մէկ մասը ժողովրդեան, որ կինան

digitised by A.R.A.R.@

գտնուիլ դեռ ուխտաւորաց կարգին մէջ։

Փառաւոր հանդիսիւ կատարուեցաւ նաեւ երկուշաբթի աւուր եղած սովորական թափորը, ի ներկայութեան բոլոր ուխտաւորաց և օտարազգի երեւելեաց։

— Ամիսէ մի ի վեր է սուրբ Յակոբայ վանքը կը գտնուի Ամերիկայի մայրաքաղաք Նահանգաց երեսփոխանական Ժողովոյ անդամ մեծահամբաւ միստր Պիտուէլ գիտնականը, որ մեծ ու արժանաւոր ընդունելութիւն գտած է Արբազան Հօր կողմէն։ Իրեն քով ունի իբրև թարգման և մտերիմ՝ Յոպսէի փոխ — հիւպատոս հանգուցեալ պարոն Յակոբ Ս. Մուրատեանի որդին՝ Մեծապատիւ պարոն Արապիան աղնիւ ու լեզուագէտ պատանին, որոյ միջոցաւ կը քաղէ յիշեալ միստր Պիտուէլ Հայոց ազգին վերայ խնդրած տեղեկութիւնները, որոնց խիստ մեծ համակրութիւն կը ցուցնէ։ Ուրիշ անգամ առիթ պիտի ունենամք կրկին դառնալու սոյն նշանաւոր անձին վերայ ի պատճառս իւր խմբագրած տմ սամերթին, որ կ'ըսուի Eclectic Magazine.

Տասն և հինգ օրի չափ կենալէն յետոյ մեկնեցաւ միստր Պիտուէլ, որոյ գալստեան պատճառն էր Ամերիկացի գաղթականաց և իրենց գործակատարին մէջ ծագած վէճը քննելու պաշտօնը։

— Ամէն տասն և հինգ օր յառաջ Նպարէթցի մահմեդական երիտասարդ մի ինքզինքը ապանեց սուրբ քաղաքիս՝ Դամասկոսի բուսած դրան քով։ Տեղւոյն այլազգիք անմիջապէս բռնեցին իւր քաղաքակից յոյն ընկերը, և կառավարութեան մատնեցին իրբեւ մարդասպան. թէպէտ և անձնասպանը յայտնի կրմկայէր թէ իւր բարոյական պատուոյն աւրբեւելուն անձամբ վէճ մինդիր ելլալ ուզելով ինքն էր իւր կենաց դաւաճանը, և ոչ ընկերը որ երբէք մեղանչած չունի։

— Անցեալ տարի, կլսիշեն ընթերցողք, յունիս ամսոյ մէջ սասսիկ բաղմութիւն մի մարախոյ անապատ դարձուց սուրբ երկրիս բոլոր արտերն ու ծառատունկները, որոց հետեւեցաւ չափազանց թանկութիւն ամէն ազգի ուտելեաց։ Վերկայ տարւոյս բարեբերութիւնը ուրախ արտիս կ'աւետեմք ընթերցողաց, որ անցեալ տարուանէն խիստ աւելի ելլալ կը հաստատեն։ Կը պատմեն թէ գեղացիին մէկը իւր մէկ պզտիկ արտը աչքէ անցընելու երթալով, ուր ցորեն սերմանած էր, տեսնելով հասկերուն բարձրութիւնը՝ քիչ մի ներս կ'երթայ ուր մինչև մէջքը կը հասնէին, և ուրախութեամբ զմայլած երբ քանի որ ներս կ'երթայ այնչափ բարձրացած կը գտնէ։ Դարձեալ մ'ալ խորը երթամ, կ'ըսէ ինքնիրեն, որ մինչեւ գլուխս ծածկէ, ու գեղը դառնալուս պարծանօք պատմեմ բարեկամացս՝ ըսելով, քիչ մ'ալ կլլաւաջէ՝ ուր երկիրը քիչ մի խորացած էր, ու յանկարծ հասկերուն տակը պահուրտած օձ մի ելնելով տոքը կը խածնէ, ու խեղճ գեղացին կիսամեռ տուն դարձած հոգին կ'աւանդէ և ուրախութիւնը իւր սրտին մէջ իւր հետը կը մտնի։

ՎԻՊԱԿ

Նախորդ թիւոյն 43 երես, առաջին էջ և տասներորդ տողը կարդա " ի 12 դեկտեմբերի 1817 "։

ՀՐԱՄԱՑԵՑԻՔ ՏՊԱԳՐԵԼ ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԱԹՈՌՈՑՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԵՍԱՅԻ ՍՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

digitised by A.R.A.R.@